«Ժամանակ». Ինչո՞ւ է սահմանափակված արտերկրից ծանրոցներ ստանալը

Դեկտեմբեր 04, 2012

Հայաստանի քաղաքացիներն արտասահմանից տարեկան միայն 2 անգամ ծանրոց ստանալու իրավունք ունեն , եւ եթե այն չի գերազանցում 150 հազար դրամը, ապա մաքսազերծման ենթակա չէ: Այդ մասին գրում է «Ժամանակ» թերթը:

«Մեր երկրում ծանրոցների փոխադրումը կամ սուրհանդակային ծառայությունը տրանսպորտային փոխադրումների ոլորտից առանձնացված է: Ծանրոցների, նամակների, փաթեթների տեղափոխումը, ինչով զբաղվում են DHL-ը, GMG-ն, «Ամերիքըն էքսպրես»-ը, լիցենզավորված գործունեություն է:

«Ապավեն» ընկերության գլխավոր տնօրեն Գագիկ Աղաջանյանը երեկ «Ժամանակի» հետ զրույցում նշեց, որ իրենք ժամանակին փորձել են համագործակցել Լիոնում, Փարիզում, Մարսելում գրասենյակների հետ, որոնք զբաղվում էին միայն որոշակի քանակի ու ծավալի արկղերի տրամադրումով, որտեղ բարձված բեռը 40 եվրոյի դիմաց ստանում եք Երեւանում:

«Բայց բավականին բարդ է Հայաստանում՝ զուտ փոխադրումների իմաստով: ՀՀ-ում կանխատեսված է, որ որոշակի մաքսային արժեքի շրջանակներում քաղաքացին ծանրոց իրավունք ունի ստանալ տարին երկու անգամ: Հակառակ դեպքում, եթե նա ամեն օր կարողանա ծանրոց ստանալ, նա որոշակի բեռ կբերի ու բիզնես կանի՝ խուսափելով հարկերից: Հավանաբար այդ նկատառումներից ելնելով է այդպես սահմանափակվել: Հակառակ դեպքում կլինի կոմերցիոն գործունեություն, եւ պետք է հարկվի այլ մեխանիզմներով»,- ասաց Գ. Աղաջանյանը»,- մեջբերում է «Ժամանակը»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am